

**ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱՄՆ-Ի ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ\*  
(պատմաքաղաքագիտական ակնարկ)**

**Գարիկ Քեռյան**

**Բանալի բառեր՝** ԱՄՆ, երկկուսակցական համակարգ, նախագահական ընտրություններ, Կոնգրես, ընտրական համակարգ, կուսակցությունների ազգային համագումարներ, նախնական ընտրություններ, երրորդ կուսակցություններ:

*Ամերիկայի Միացյալ Նահանգները երկկուսակցական համակարգ ունեցող պետություն է: ԱՄՆ-ի Դեմոկրատական և Հանրապետական կուսակցությունները, միմյանց փոխարինելով իրենց ձեռքում են պահում բարձրագույն օրենսդիր և գործադիր իշխանությունները: Մինչ վերջնական երկկուսակցական համակարգի ձևավորումը՝ Դեմոկրատական կուսակցություն-Հանրապետական կուսակցություն ձևաչափով, որը տեղի է ունեցել 19-րդ դարի կեսերին, ԱՄՆ-ում ընթացել են կուսակցական ուժերի զգալի տեղաշարժեր: 1790-1824թթ. ընթացքում երկրում գործող երկու հիմնական կուսակցություններն էին ֆեդերալիստների և դեմոկրատ-հանրապետականների կուսակցությունները: Վերջիններիս անվանում էին նաև ջեֆերսոնյան հանրապետականներ: Ջորջ Վաշինգտոնը, որը նախագահ ընտրվեց 1789 և 1792թթ. և կառավարեց մինչև 1796թ., փաստորեն անկուսակցական էր, չնայած հովանավորում էր ֆեդերալիստներին: 1796թ-ից նախագահական ընտրություններն արդեն կրում էին կուսակցական բնույթ: Մինչև 1824թ՝ մեկ անգամ հաղթեցին ֆեդերալիստները (նախագահ Ջ. Ադամս. 1796-1800), մնացած բոլոր դեպքերում դեմոկրատ-հանրապետականները (Ջեֆերսոն. 1800-1804 և 1804-1808թթ., Ջ. Մեդիսոն. 1808-1812 և 1812-1816թթ., Ջ. Մոնրո. 1816-1820 և 1820-1824թթ.): Պարտությունները նախագահական ընտրություններում կազմալուծեցին ֆեդերալիստների կուսակցությունը: Անընդունակ գտնվելով ընդլայնել իր սոցիալական հենարանը և այնպիսի պլատֆորմ մշակել, որ կարողանա գրավել քաղաքացիների ավելի լայն խավեր՝ ֆեդերալիստների կուսակցությունը արագորեն կորցնում էր իր ազդեցությունը և 1820թ., չկարողանալով թեկնածու առաջադրել, դուրս եկավ քաղաքական ասպարեզից: Դեմոկրատ-հանրապետականների կուսակցությունը, հակառակ դրան, գնալով ավելի էր ամրապնդում իր դիրքերը, մեծացնում կուսակցության ազդեցությունն ընտրողների վրա: 1824-1828թթ. նախագահ Ջ. Կ. Ադամսը նույնպես դեմոկրատ-հանրապետական էր: Դեմոկրատ-հանրապետական կուսակցության աճի և հզորացման հետ մեկտեղ նրա մեջ ձևավորվեցին խոշոր կուսակցական տարածաշրջանային ֆրակցիաներ: Դրա ցայտուն արտահայտությունը 1824թ. ընտրություններն էին, երբ կուսակցության չորս ֆրակցիաները առաջադրել էին իրենց թեկնածուներին (Ջ. Կ. Ադամս, Է. Ջեկսոն, Ու. Կրոուֆորդ, Գ. Կլեյ): Նրանց մեջ ամենախոշորը նախկին զեներալ Էնդրյու Ջեկսոնի գլխավորած ֆրակցիան էր: Ջեկսոնը հայրենասեր, ազնիվ մարդու համբավ ուներ և մեծ հեղինակություն: Աստիճանաբար իր ձեռքը վերցնելով կուսակցության ղեկավարությունը՝ Ջեկսոնը հասավ այն բանին, որ ընդունվեց նոր նախընտրական ծրագիր: Ծրագիրը կողմնորոշված էր դեպի հասարակ ընտրողները (մանր ֆերմերներ, նոր ընտրողներ,*

\* Հոդվածն ընդունվել է 26.01.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

նոր վերաբնակիչներ), որոնց ծայնը վճռորոշ էր: 1828թ. է. Ջեկսոնը ընտրվեց նախագահ (կառավարեց 1828-1832 և 1832-1836թթ.), որից հետո Դեմոկրատական-հանրապետական կուսակցությունը ամբողջովին վերակազմավորվեց: Ջեկսոնի հակառակորդները Ջ. Կ. Ադամսի և Գ. Կլեյի գլխավորությամբ իրենց կուսակցական ֆրակցիաների հիման վրա անջատվեցին և կազմեցին այսպես կոչված ազգային-հանրապետականների կուսակցությունը, բայց այն շատ կարճ կյանք ունեցավ և պարտություն կրելով 1828 և 1832թթ. ընտրություններում՝ կազմալուծվեց ու նույնպես հեռացավ երկրի քաղաքական ասպարեզից: Իսկ Ջեկսոնի կուսակցությունը, վերանվանվելով Դեմոկրատական կուսակցություն, վերջնականապես դարձավ ԱՄՆ-ի երկկուսակցական համակարգի առաջին քաղաքիչ կուսակցությունը, որպիսին մնում է մինչև օրս: Բայց մինչև երկրորդ՝ հիմնական կուսակցության կազմավորումը Դեմոկրատական կուսակցությունը բախտ չունեցավ միանձնյա տնօրինելու ԱՄՆ-ի քաղաքական կյանքը: Ջեկսոնի բոլոր հակառակորդներն արագ կերպով միավորվեցին՝ հիմնելով Վիգերի կուսակցությունը: Վիգերը մասնակցեցին 1836թ. նախագահական ընտրություններին, սակայն պարտություն կրեցին (1836-1840թթ. նախագահ էր դեմոկրատ Մ. Վան-Բյուրեն): Այնուամենայնիվ շարունակելով պայքարը՝ Վիգերի կուսակցությունը կարողացավ հաղթանակի հասնել 1840 և 1848թթ. ընտրություններում և ԱՄՆ-ն ունեցավ երկու նախագահ, որոնք պատկանում էին այս կուսակցությանը (Ու. Հարիսոն. 1840-1844 և Ջ. Թեյլոր. 1848-1852թթ.): Նրանց մեջտեղում կառավարած Ջ. Պոլկը դեմոկրատ էր: Վիգերի կուսակցությունը, պարտություն կրելով 1852 և 1856թթ. ընտրություններում (1852-1856թթ. նախագահ էր դեմոկրատ Ֆ. Պիրսը, իսկ 1856-1860թթ.՝ դեմոկրատ Ջ. Բյուկենենը), արագ կերպով թուլացավ և 1850-ական թթ. կեսերին կազմալուծվելով՝ նույնպես հեռացավ քաղաքական ասպարեզից:

19-րդ դարի կեսերին ԱՄՆ-ի ներքաղաքական կյանքի առաջնային՝ ստրկության պահպանման հարցի շուրջ ընթացող սուր քաղաքական վեճերը հանգեցրին քաղաքական խմբավորումների ուժերի նոր վերադասավորման: Վիգերի կուսակցության կազմալուծումից հետո պառակտվեց նաև Դեմոկրատական կուսակցությունը հարավային և հյուսիսային ֆրակցիաների: Հարավիցի դեմոկրատները պահանջում էին պահպանել ստրկությունը: Միևնույն ժամանակ ստրկության վերացման համար պայքարող քաղաքական գործիչները և Դեմոկրատական կուսակցության հակառակորդները, միավորվելով, 1854թ. հիմնադրեցին **Հանրապետական** կուսակցությունը: Աջակցություն ստանալով նրանցից, ովքեր հանդես էին գալիս ձեռնարկատիրության և մասնավոր սեփականության ազատության, ստրկության տարածման և ընդհանրապես ստրկական աշխատանքի վերացման պահանջներով՝ Հանրապետական կուսակցությունն իր առաջին թեկնածուին առաջադրեց 1856թ. ընտրություններում: Երկրորդ անգամ՝ 1860թ., Հանրապետական կուսակցությունը նախագահի թեկնածու առաջադրեց Աբրահամ Լինկոլնին: Դեմոկրատական կուսակցության ներսում ծագած խոր տարածայնությունները հանգեցրին նրան, որ հարավային և հյուսիսային ֆրակցիաները առաջադրեցին իրենց ինքնուրույն թեկնածուներին: Այս և նաև երրորդ թեկնածուի առկայությունը հնարավորություն տվեցին Աբրահամ Լինկոլնին հաղթանակ տանելու և դառնալու ԱՄՆ-ի առաջին հանրապետական նախագահը: Այս իրադարձություններից հետո վերջնականապես հաստատվեց ԱՄՆ-ի երկկուսակցական համակարգը, որի անփոփոխ սուբյեկտները դարձան Դեմոկրատական և Հանրապետական կուսակցությունները: Հարավի ընտրողները, դժգոհ հանրապետականների քաղաքականությունից, որը հանգեցրեց քաղաքացիական պատերազմին (1861-1865թթ.) և հարավային նահանգների հասարակական-տնտեսական

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

կարգերի արմատական վերակառուցմանը, հետագա հարյուր տարիների ընթացքում, որպես կանոն, քվեարկում էին դեմոկրատների օգտին:

Քաղաքացիական պատերազմի ավարտից հետո սկսվում է ԱՄՆ-ի քաղաքական կուսակցությունների զարգացման նոր ժամանակաշրջանը, որին արդեն բնորոշ էր կայուն և հաստատված երկկուսակցական համակարգը՝ իր երկու կուսակցություններով: 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի առաջին երեք տասնամյակների ընթացքում Հանրապետական կուսակցությունը ուներ բացահայտ առավելություն: Հաղթելով քաղաքացիական պատերազմում, Հանրապետական կուսակցությունը դարձավ մեծամասնության կուսակցություն: 1896-1930թթ. ընթացքում Հանրապետական կուսակցությունն իր ձեռքում էր պահում ինչպես Սպիտակ տունը, այնպես էլ Կոնգրեսը: Այս ժամանակաշրջանում նա ուներ բավականին լայն սոցիալական հենարան, որի մեջ մտնում էին ձեռնարկատերեր և բանվորներ, պահպանողականներ և լիբերալներ, քաղաքային բնակչության և ֆերմերների լայն խավեր: Սակայն նոր վերաբնակիչների հոսքը և հանրապետական կառավարության որոշ ոչ ժողովրդական ձեռնարկումները, ինչպիսին էր, օրինակ, ոգելից խմիչքների վաճառքի արգելումը, հանգեցրին նրան, որ քաղաքաբնակների բավականին հոծ զանգվածներ սկսեցին թեքվել Դեմոկրատական կուսակցության կողմը: Միևնույն ժամանակ, գյուղատնտեսության մեջ սկսված ձգնաժամային երևույթները նպաստեցին, որ հանրապետականներից երես դարձնեն նաև ֆերմերները: 1932թ. նախագահական ընտրություններին Հանրապետական կուսակցությունը մասնակցում էր խիստ անբարենպաստ պայմաններում՝ որպես կառավարող կուսակցություն իր ուսերի վրա կրելով 1929թ. սկսած և ԱՄՆ-ի պատմության մեջ ամենամեծ ու կործանարար տնտեսական ձգնաժամի մեղքը: Հետևանքներն անսպասելի չէին: Դեմոկրատական կուսակցության թեկնածու Ֆ. Դ. Ռուզվելտը հաղթանակ տարավ և տաս տարուց ավելի իր ձեռքում պահեց երկրի կառավարման դեկը (1933-1945թթ.): Ֆրանկլին Ռուզվելտի նոր տնտեսական քաղաքականությունը երկիրը դուրս բերեց ձգնաժամից, ինչը Դեմոկրատական կուսակցությանը ամերիկյան ընտրողների աչքում վերածեց տնտեսական վերածննդի կուսակցության: Դեմոկրատները դրա շնորհիվ ընդլայնեցին իրենց սոցիալական հենարանը՝ ի հաշիվ հատկապես բանվորների: Չնայած հանրապետականները պահպանում էին իրենց ազդեցությունը Հյուսիսային նահանգներում, դեմոկրատներին այստեղ ևս հաջողվեց որոշակի դիրքեր նվաճել: Նախապատերազմյան տարիներին և հատկապես պատերազմի ընթացքում դեմոկրատների կողմն անցան հրեաները և ԱՄՆ-ի բնակչության էթնիկական այլ խմբեր, ինչպես նաև տնտեսապես ավելի վատ ապահովված մարդիկ: Հետպատերազմյան առաջին տարիներին դեմոկրատները շարունակում էին իրենց ձեռքում պահել իշխանությունը (նախագահ Հ.Թրուման-1945-1953թթ.): Դրանից հետո հանրապետականները կարողացան վերականգնել հավասարակշռությունը: 1920թ-ից մինչև 2015թ. ԱՄՆ-ի Հանրապետական կուսակցությունը մոտ 50 տարի եղել է իշխանության դեկին [1]:

ԱՄՆ-ի նախագահների կուսակցականությունը 1920թ.-ից հետո [2]

<b>Տարեթիվը</b>	<b>Նախագահը</b>	<b>Կուսակցությունը</b>
1921-1923	Ու. Հարդինգ	հանրապետական
1923-1929	Ք. Քուլիջ	հանրապետական
1929-1933	Հ. Հուվեր	հանրապետական
1933-1945	Ֆ. Ռուզվելտ	դեմոկրատ
1945-1953	Հ. Թրուման	դեմոկրատ
1953-1961	Դ. Էյզենհաուեր	հանրապետական
1961-1963	Ջ. Քենեդի	դեմոկրատ
1963-1969	Լ. Ջոնսոն	դեմոկրատ
1969-1974	Ռ. Նիքսոն	հանրապետական
1974-1977	Ջ. Ֆորդ	հանրապետական
1977-1981	Ջ. Քարտեր	դեմոկրատ
1981-1989	Ռ. Ռեյգան	հանրապետական
1989-1993	Ջ. Բուշ-Ավագ	հանրապետական
1993-2001	Բ. Բլինթոն	դեմոկրատ
2001-2009	Ջ. Բուշ-Կրտսեր	հանրապետական
2009 -	Բարաք Օբամա	դեմոկրատ

Այսօր Հանրապետական և Դեմոկրատական կուսակցությունները շարունակում են տնօրինել քաղաքական կյանքը: Դեմոկրատները վերահսկում են նահանգների կառավարությունները և Կոնգրեսը, իսկ հանրապետականները կարողացան ավելացնել իրենց տեղերը կոնգրեսում և մինչև 1992թ. տեղի ունեցած տաս նախագահական ընտրություններից յոթում հաղթանակ տարան: Դեմոկրատական կուսակցությանը երկրում աջակցում են ռասայական և կրոնական փոքրամասնությունները: Արհմիությունների դեկավարությունը շարունակում է մնալ հավատարիմ դեմոկրատներին, չնայած որ արհմիությունների շարքային անդամների մի զգալի մասը, ինչպես ցույց են տվել վերջին հարցումները, քվեարկում է հանրապետականների օգտին: Դեմոկրատներին հակառակ, հանրապետականները ավելի մեծ աջակցություն են վայելում այն ամերիկացիների շրջանում, որոնք պատկանում են հասարակության ավելի բարձր շերտերին: Մեծ եկամուտներ ունեցող, բարձր կրթության և հեղինակավոր աշխատանքի տեր ամերիկացիներ

որ սովորաբար հանրապետական են դառնում: Հանրապետականներին համակրում են նաև նրանք, ովքեր իրենց պահպանողական են համարում:

**Աշխարհագրական** առումով Դեմոկրատական կուսակցության դիրքերն ավելի ամուր են հարավում, հյուսիս-արևելյան և միջին-արևմտյան խոշոր արդյունաբերական նահանգների քաղաքներում: Հանրապետականների ազդեցությունն ավելի ուժեղ է փոքր արվարձանային քաղաքներում: Կուսակցությունների տարբերությունը զգացվում է նաև նրանց կողմնակիցների տարիքի և սեռի մեջ: Ավագ սերնդի ընտրողները, որոնք ծայնի իրավունք են ստացել մեծ լճացման և երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, շարունակում են մնալ դեմոկրատների կողմում: Ավելի երիտասարդ ընտրողները, հատկապես նրանք, որոնց 30 տարին դեռ չի լրացել, սկսել են հակվել դեպի հանրապետականները: Տարբերություն է նկատվում նույնիսկ կանանց և տղամարդկանց շրջանում: Տղամարդկանց մեծ մասը համակրում է հանրապետականներին այն դեպքում, երբ կանայք օժանդակում են դեմոկրատներին: Կուսակցությունների կազմը որոշիչ է դարձել նրանց գաղափարական կողմնորոշման և քաղաքական դիրքորոշման համար: Հանրապետականներն ավելի պահպանողական են, քան դեմոկրատները: Հանրապետական կուսակցության քաղաքական կուրսը նախատեսում է մասնավոր սեկտորի խրախուսում, ներքին հարցերում կառավարության դերի նվազեցում և ԱՄՆ-ի պաշտպանողական կարողությունների մեծացում: Դրան հակառակ՝ Դեմոկրատական կուսակցությունը, որը հսկողության տակ է պահում նահանգային կառավարությունները, աշխատում է ավելի շատ դիմել կառավարության օգնությանը ներքին սոցիալ-տնտեսական հարցերը լուծելու համար: Դեմոկրատները ավելի շատ են պայքարում ներքին ծախսերը կրճատելու դեմ: Եվ, բնականաբար, նրանք ավելի զուսպ են պաշտպանական բյուջեի մեծացման հարցում: Վերջին հարյուրամյակի ընթացքում ամերիկյան կուսակցությունները գտնվում են հարաբերական քաղաքական հավասարակշռության մեջ: Բնակչության մոտ 35-40 տոկոսը իրեն համարում է հանրապետական, նույնքանն էլ՝ դեմոկրատ: Մյուսները՝ անկախ, անկուսակցական (մոտ 20-30 տոկոսը) [3]: ԱՄՆ-ի ներքաղաքական կյանքում երկու կուսակցությունների փոխհավասարակշռությունը արդեն դարձել է օրինաչափություն: Արդեն ամրագրված է երկրի քաղաքական համակարգին բնորոշ այն իրողությունը, որ մի կուսակցություն պետք է վերահսկի օրենսդիր իշխանությունը, իսկ մյուսը՝ գործադիրը: Համազգային մասշտաբով Դեմոկրատական կուսակցությունը 1932-1992թթ. իր ձեռքում էր պահում Կոնգրեսի մեկ կամ երկու պալատները՝ բացառությամբ չորս տարվա, իսկ Հանրապետական կուսակցությունը 1968-1992թթ. տիրում էր նախագահի պաշտոնին՝ բացառությամբ նույնպես չորս տարվա (Քարտեր 1976-1980թթ.):

ԱՄՆ-ի Հանրապետական և Դեմոկրատական կուսակցությունները թույլ կազմակերպական կառուցվածքներ ունեցող ընտրական կուսակցություններ են: Նրանք չունեն պարտադիր անդամություն և, ըստ էության, դեմոկրատ կամ հանրապետական են համարվում ընտրությունների ժամանակ այս կամ այն կուսակցության օգտին քվեարկած ընտրողները: Ամերիկյան կուսակցությունները նաև ապակենտրոնացված կուսակցություններ են: Յուրաքանչյուր մակարդակում գոյություն ունի առանձին և համարյա լիովին անկախ կազմակերպություն, որն անում է այն, ինչ ցանկանում է, իսկ շատ շրջաններում և քաղաքներում ոչ մի կուսակցական կազմակերպություն էլ չկա: Դեմոկրատական և Հանրապետական կուսակցությունների կազմակերպական կառույցները համարյա թե նույնն են: Երկու կուսակցություններում էլ բարձրագույն մարմինը ազգային համագումարն է, որը գումարվում է չորս տարին մեկ անգամ՝ նախագահի թեկնածու առաջադրելու համար: Այս համագումարների միջև կուսակցության գործունեությունը ղեկավարվում

է ազգային կոմիտեի կողմից, որը կազմված է յուրաքանչյուր նահանգից և տարածքից ընտրված պատգամավորներից: Կոնգրեսում յուրաքանչյուր կուսակցություն ունի մեկական կոնգրեսական ընտրարշավի կոմիտե, որն օգնում է վերընտրությանը մասնակցող անդամներին կամ Կոնգրեսի թափուր տեղերի համար պայքարող ապագա կոնգրեսմենին և կամ պաշտպանում իր թեկնածուներին ընդդիմադիր կուսակցության ձևչումից: Կուսակցության ամենօրյա աշխատանքը կառավարում է լրիվ դրույքով վարձատրվող ազգային նախագահը, որն ընտրվում է կոմիտեի կողմից: Որոշ չափով այլ է կուսակցական գործերի վարման ձևը տեղերում: Յուրաքանչյուր նահանգում կա Դեմոկրատական և Հանրապետական նահանգային կուսակցություն՝ կազմակերպված նահանգային օրենքի համաձայն: Սովորաբար դրանցից յուրաքանչյուրը կազմված է կենտրոնական կոմիտեից և նրանից ներքև կանգնած գավառային, երբեմն՝ քաղաքային, ավանային և նույնիսկ շրջանային կոմիտեներից: Այս կոմիտեների անդամները տարբեր եղանակներով են ընտրվում, երբեմն նախնական ընտրություններում, երբեմն համագումարներում և այլն [4]: Յուրաքանչյուր նահանգի առանձնահատկությունների և նահանգային օրենսդրությունների տարբերությունների հետ կապված՝ տարբերվում են նաև կուսակցական իշխանության բաշխման ձևերը նահանգային կուսակցություններում: Քիչ թվով վայրերում են կուսակցական ուժեղ ղեկավարներն իրենց ձեռքում պահում նահանգային կոմիտեները: Այլ վայրերում ընտրված հզոր պաշտոնյաները՝ հիմնականում նահանգային օրենսդիրները, շերիֆները կամ դատավորները, վերահսկում են դրանք: Մնացած նահանգներում կուսակցական կոմիտեները դուրս են պետական պաշտոնյաների վերահսկողությունից, գործում են ինքնուրույն և կազմված են տեղական տարբեր խմբակցությունների ներկայացուցիչներից:

Ինչպես նշեցինք, Դեմոկրատական և Հանրապետական կուսակցությունների բարձրագույն մարմիններն են համագումարների կողմից ընտրված Հանրապետականների Ազգային Կոմիտեն (Հ.Ա.Կ.) և Դեմոկրատների Ազգային Կոմիտեն (Դ.Ա.Կ.): Սակայն ամերիկյան կուսակցությունների առաջնորդներ (լիդերներ) համարվում են ոչ թե ազգային կոմիտեների նախագահները, այլ նախագահը կամ նախագահի պաշտոնում կուսակցության կողմից առաջադրված թեկնածուն՝ կախված այն բանից, թե տվյալ կուսակցությունը հաղթել, թե պարտվել է վերջին նախագահական ընտրություններում: Կազմակերպական կառույցների մեջ մեծ դեր են խաղում նաև Կոնգրեսի կուսակցական ֆրակցիաները, որոնց մեծամասնության կարծիքը հաճախ վճռորոշ նշանակություն է ունենում կուսակցությունների քաղաքական գծի ճշտման ժամանակ: Վերջին տասնամյակներում տեղի ունեցած նախագահական և պառլամենտական ընտրությունները պարզորոշ ցույց տվեցին կուսակցական ապարատի աճող դերը հաղթանակի հասնելու գործում: Այդ պատճառով 1960-ական թթ. սկսվեցին նոր միտումներ ամերիկյան կուսակցությունների գարգացման գործընթացում, որն առավել դրսևորվեց կազմակերպչական ամրապնդմամբ: 1960-ական թթ. վերջից և 1970-ական թթ. սկզբից հանրապետականները իրենց կուսակցությունը սկսեցին վերածել լավ ֆինանսավորվող, գերազանց կադրերով համալրված մի կազմակերպության, որն զբաղվում էր հանրապետական թեկնածուներ գտնելու և ընտրելու գործով, հատկապես Կոնգրեսի համար: Զգալիորեն մեծացավ և ուժեղացավ կուսակցական բյուրոկրատիան և բարձրացավ նրա աշխատանքի արդյունավետությունը: Արդյունքում հանրապետականները 1968-1984թթ. ընթացքում հաղթեցին հինգ նախագահական ընտրություններից չորսում և կարճ ժամանակում Սենատը վերցրին իրենց հսկողության տակ: Դրանից հետո դեմոկրատները համոզվեցին, որ արդյունավետ գործող բյուրոկրատիան ավելի լավ է, քան միմյանց դեմ պայքարող կուսակցական խմբավորումների հավաքածուն և նույնպես ձեռնամուխ եղան իրենց կու-

սակցության կազմակերպական ամրապնդմանը՝ այս գործում մրցակցության մեջ մտնելով հանրապետականների հետ: Դեմոկրատներին նույնպես հաջողվեց զգալիորեն ամրապնդել կուսակցությունը, սակայն մինչև 1990-ական թթ. սկզբները Հանրապետական կուսակցությունն ավելի ամուր կազմակերպական կառույցներ ուներ, քան Դեմոկրատական կուսակցությունը:

Ամերիկյան կուսակցությունների նահանգային և կենտրոնական ղեկավար մարմինների կարևորագույն խնդիրը նվիրատուներից դրամական միջոցների հավաքումն է, որովհետև կուսակցական անդամավճարներ այնտեղ չկան և ֆինանսավորման միակ աղբյուրը նվիրատվությունն է: Ընտրական մրցապայքարը ԱՄՆ-ում շատ թանկ արժե և առանց հզոր ֆինանսական միջոցների՝ այստեղ հնարավոր չէ պայքար մղել պետական իշխանության օրենսդիր և գործադիր մարմիններին տիրելու համար: Դրանը ծախսվում է կուսակցական թեկնածուներ հավաքագրելու և նրանց ուսուցանելու, իրավական և ֆինանսական խորհրդատվության, սոցիոլոգիական հետազոտությունների և հարցումների անցկացման, ընտրողների հակումների վերլուծության, կուսակցության անունից գովազդի կազմակերպման և բազմաթիվ այլ նպատակներով: Դրամական փոխանցումների համակարգման և վերահսկման համար լայնորեն օգտագործվում են նոր տեխնոլոգիաներ, հաստկապես կոմպյուտերներ, որոնք հնարավորություն են տալիս կազմելու միլիոնավոր քաղաքացիների անուններ ընդգրկող ցուցակներ, որոնք որ կարող են նվիրատվություններ անել կուսակցության համար: 1983թ. Հանրապետականների Ազգային կոմիտեն 1,7 մլն նվիրատուներից 35 մլն դոլար հավաքեց: 1986թ. ընտրությունների ժամանակ Հ.Ա.Կ.-ը կարողացավ 1,8 մլն նվիրատուներից 75 մլն դոլար հավաքել [5]: Դեմոկրատների Ազգային կոմիտեն, հետևելով հանրապետականների ռազմավարությանը, 1985-86թթ. ընտրական փուլում կարողացավ 15 մլն դոլար հավաքել, որը հանրապետականների հավաքած գումարի մեկ հինգերորդ մասն էր, սակայն դա շատ ավելին էր, քան 1970-ական թթ. հավաքածը[6]: Ըստ լավատեղյակ աղբյուրների՝ ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար Հիլարի Բլինթոնի նախընտրական բյուջեն 2016 թ. նախագահական ընտրություններում կազմել է 2,5 միլիարդ դոլար, որն ամենաթանկը կարող է դառնալ երկրի պատմության մեջ: Համեմատության համար կարելի է նշել, որ Բարաք Օբամայի նախընտրական բյուջեն 2012 թ. կազմել է 716 մլն դոլար[7]:

Ինչպես ժամանակակից քաղաքական կուսակցությունների մեծ մասը, այնպես էլ ԱՄՆ-ի Դեմոկրատական և Հանրապետական կուսակցությունները միատարր չեն: Նրանց ներսում գոյություն ունեն աջ, ձախ և ցենտրիստական բնույթի կուսակցական խմբավորումներ ու հոսանքներ: Դեմոկրատական կուսակցության ներսում կազմակերպչորեն առավել ամուր և առավել երկարակյացը հարավային դեմոկրատների աջ խմբավորումն է, որը գոյություն ունի դեռևս 19-րդ դարի կեսերից և հայտնի է **դիկսիկրատների** խմբավորում անունով: Իսկ Հանրապետական կուսակցության ներսում բավականին հստակորեն ուրվագծվում են լիբերալ, ցենտրիստական և պահպանողական թևերը: ԱՄՆ-ի երկու հիմնական կուսակցությունները չունեն նաև ծրագիր: Նրանց **քաղաքական գործունեության փաստաթուղթն այն նախընտրական ծրագիրն է**, որը հաստատվում է նախագահական ընտրություններից առաջ յուրաքանչյուր չորս տարին մեկ գումարված ազգային համագումարներում: Դա փաստացիորեն ապագա պրեզիդենտի գործունեության ծրագիրն է, որը ոչինչ չի պարտավորեցնում կուսակցական կազմակերպություններին, իսկ սեփական ծրագրի իրականացման համար նախագահը ավելի շատ աշխատում է հաշվետվություն տալ ընտրողներին հաջորդ ընտրություններից առաջ: Դեմոկրատական և Հանրապետական կուսակցությունների ազգային կոմիտեների շտաբ-բնակարանները գտնվում են Վաշինգտոնում: Դեմոկրատական կուսակցության

պաշտոնական խորհրդանիշը է՛լն է, իսկ Հանրապետական կուսակցությանը՝ փիղը: Այս խորհրդանիշները առաջացել են 1874թ., երբ ամերիկյան նշանավոր ծաղրանկարիչ Թոմաս Նաստը նախընտրական պայքարով տարված դեմոկրատներին պատկերեց է՛լի, իսկ հանրապետականներին՝ փիղ տեսքով:

**ԱՄՆ-ի քաղաքական կուսակցությունների ողջ գործունեությունը հանգում է նախագահականական ընտրությունների նախապատրաստմանն ու անցկացմանը:** Չնայած ամեն տարի ԱՄՆ-ում տեղի են ունենում ընտրություններ (նահանգապետերի, կոնգրեսմենների, նահանգների և օկրուգների), սակայն պրեզիդենտական ընտրությունները երկրի ամենակարևոր քաղաքական իրադարձությունն են: ԱՄՆ-ն նախագահական հանրապետություն է: Գործադիր իշխանության և պետության գլուխ կանգնած է նախագահը, որն ամրագրված է մինչև օրս գործող 1787թ. սահմանադրությամբ: Նա նաև զինված ուժերի գլխավոր հրամանատարն է, փոխնախագահի հետ միասին ընտրվում է չորս տարով անուղղակի (երկաստիճան) ընտրություններ միջոցով: Այս գործընթացում ևս վճռորոշ է կուսակցական պատկանելությունը: Թեկնածություններն առաջադրվում են կուսակցական համագումարներում: Այնուհետև յուրաքանչյուր նահանգ ընտրում է այնքան ընտրյալ, որքան ներկայացուցիչ ունի Կոնգրեսում: Ինչպես նախագահական, այնպես էլ իշխանության բոլոր մակարդակներում անցկացվող ընտրությունները հիմնված են ծայրերի մեծամասնության և «Հաղթողը վերցնում է ամեն ինչ» սկզբունքների վրա: Չայների մեծամասնության համակարգը նշանակում է, որ կոնգրեսմենների, սենատորների, նահանգապետերի և նախագահի համար անցկացվող ընտրություններում և նահանգային օրենսդիր մարմնի, քաղաքապետի և քաղաքային խորհրդի անդամի պաշտոնի համար անցկացվող համարյա բոլոր ընտրություններում հաղթում է նա, ով ամենամեծ թվով քվեներ է ստանում, նույնիսկ եթե դրանք չեն կազմում քվեների մեծամասնությունը[8]:

1845թ. ԱՄՆ-ի Կոնգրեսի որոշմամբ յուրաքանչյուր չորրորդ տարվա նոյեմբեր ամսի առաջին երեքշաբթին նախագահական ընտրությունների օրն է: Այն քաղաքական գործիչները, ովքեր ձգտում են առաջադրվելու Դեմոկրատական և Հանրապետական կուսակցություններից, իրենց մրցապայքարը սկսում են դեռ երկու տարի առաջ: Նրանք ստեղծում են հատուկ կազմակերպություններ՝ իրենց թեկնածությունը քարոզելու և պաշտպանելու համար, ձգտելով որքան հնարավոր է ավելի շատ նահանգներ ընդգրկել: Այդ կազմակերպություններում հիմնականում աշխատում են կամավորներ, չնայած կան նաև պրոֆեսիոնալներ: Նրանց հիմնական խնդիրն է ժողովրդայնացնել իրենց թեկնածուի անունն ու ծրագիրը:

ԱՄՆ-ի նախագահի թեկնածուներ սկզբից առաջադրում էին Կոնգրեսի անդամները, որոնք, ըստ կուսակցական պատկանելության, գաղտնի հավաքվում էին փակ դռների հետևում և որոշում թեկնածուին: Սակայն հետագայում, սկսած 1831թ., թեկնածուների առաջադրումը սկսեցին կատարել կուսակցությունների ազգային համագումարներում: Ազգային համագումարները աղմկոտ, կոլորիտային համաժողովներ են, որոնք նույնպես անցկացվում են չորս տարին մեկ և հաստատակամորեն մտել են ԱՄՆ-ի քաղաքական կյանքի մեջ: Մինչև 20-րդ դարը՝ կուսակցական համագումարներում թեկնածուների առաջադրումը կատարում էին ուժեղ կուսակցական գործիչները: Որոշումներն ընդունվում էին այսպես կոչված «ծխարանային սենյակներում» որտեղ կուսակցական շեֆերը ծխամորձերով և սիգարներով երկարատև խորհրդակցություններից հետո վճռում էին թեկնածուին: Շուտով այս պրակտիկան նույնպես վերացվեց և շատ նահանգներում օրենքներ ընդունվեցին, որոնցով պահանջ էր դրվում թեկնածուների առաջադրումը կատարել նախնական ընտրությունների միջոցով: Նախնական ընտրություններն սկսվում են ԱՄՆ-ում փետրվարից և ավարտվում են շոգ ամռանը՝ ազգային համագումարների

նախօրյակին: Որոշ նահանգներում նախնական ընտրությունների փոխարեն անց են կացվում նախընտրական կուսակցական միտինգներ: Կուսակցական համագումարների պատգամավորների ընտրությունների կարգը բավականին խճճված է, որովհետև տարբեր նահանգներում այն կատարվում է տարբեր ձևով: Որոշ նահանգներ անց են կացնում բաց նախնական ընտրություններ, որոնց ժամանակ գրանցված ընտրողները, անկախ իրենց կուսակցական պատկանելությունից, կարող են քվեարկել ցանկացած թեկնածուի օգտին: Որոշ նահանգներում էլ անցկացվում են փակ նախնական ընտրություններ, որտեղ ձայն ունեն միայն այն ընտրողները, որոնք նախօրոք հաստատել են իրենց անդամակցությունը այս կամ այն կուսակցությանը: Բացի այս՝ կան նահանգներ էլ, որտեղ կիրառվում է հավասարազորության սկզբունքը կամ «հաղթողը ստանում է ամեն ինչ» սկզբունքը: Առաջինի դեպքում կուսակցական համագումարների համար ընտրվող պատգամավորների թիվը որոշակի հարաբերությամբ համապատասխանում է թեկնածուների օգտին տրված ձայներին: Այսինքն, եթե որևէ թեկնածու բավականին շատ ձայներ է հավաքել նախնական ընտրությունների ժամանակ, ուրեմն նրան պաշտպանող ավելի մեծ թվով պատգամավորներ պետք է ուղարկվեն ազգային համագումար և ընդհակառակը: Երկրորդ դեպքում ձայների մեծամասնությունը ստացած թեկնածուն ազգային կուսակցական համագումարում ստանում է տվյալ նահանգի բոլոր ձայները: Կիրառվում են նաև նախնական ընտրությունների այլ ձևեր<sup>[9]</sup>: Նախնական ընտրությունների ժամանակ թեկնածուների համար վճռորոշ նշանակություն են ունենում երկու միջոցառումներ, որոնց արդյունքները հնարավորություն են տալիս երկու կուսակցություններին էլ կանխագուշակելու ապագա իրադարձությունները: Դրանցից մեկը նախընտրական միտինգն է Այովա նահանգում, փետրվարի սկզբներին, որտեղ առաջին անգամ փորձարկվում է թեկնածուի ուժը: Մյուսը՝ ութ օր անց անցկացվող նախնական ընտրություններն են Նյու-Հեմփշիր նահանգում: Այն Կանադային սահմանակից և մեկ միլիոնից ավելի բնակչություն ունեցող նահանգ է: Նախագահական ընտրությունների պատմությունը ցույց է տալիս, որ այս երկու միջոցառումները հաջողությամբ անցկացրած թեկնածուները հետագայում հաղթել են նաև իսկական ընտրություններում: Այդ պատճառով այն թեկնածուները, որոնց համար անհաջողությամբ են ավարտվում այս նախընտրական միջոցառումները, սովորաբար հանում են իրենց թեկնածությունը: Նախնական ընտրությունների գազաթնակետը **կուսակցությունների ազգային համագումար է**: Համագումարներում հաստատվում են կուսակցությունների նախընտրական պլատֆորմները և պրեզիդենտության թեկնածուները:

ԱՄՆ-ի երկկուսակցական համակարգի առանձնահատկությունները և ընտրությունների անցկացման սկզբունքները գրեթե անհնարին են դարձնում փոքր կուսակցությունների մուտքը տեղական և համապետական իշխանության մարմիններ՝ նրանց հնարավորությունները լիովին հավասարեցնելով գրոյի: Ամերիկյան ընտրությունների ձայների մեծամասնության և «**Հաղթողը վերցնում է ամեն ինչ**» սկզբունքները փակում են նոր կուսակցությունների ստեղծման ճանապարհը, վանում են նրանցից ընտրողներին, որոնց համար ի սկզբանե պարզ է լինում, որ փոքր կուսակցությունների ներկայացուցիչները չեն կարող անցնել: Այնինչ եվրոպական երկրների մեծ մասում ընտրությունները հիմնված են համամասնական ներկայացուցչության վրա: Կուսակցությունները պառլամենտում տեղեր են ստանում ընտրությունների ժամանակ ստացած ձայների քանակին համապատասխան: Քանի որ ամենափոքր կուսակցությունները հնարավորություն ունեն ինչ-որ բան ստանալու, փոքրաթիվ կուսակցությունները այնտեղ հիմք ունեն կազմավորվելու: Իսկ ԱՄՆ-ում միայն բազմանդամ կուսակցությունը կարող է գոյատևել: Գործնականում դա նշանակում է, որ մեծ մասամբ կարող են երկարատև գոյատևել միայն երկու

լուրջ կուսակցություն՝ մեկը կազմված նրանցից, ովքեր աջակցում են արդեն իշխանության գլուխ կանգնած կուսակցությանը, իսկ մյուսը՝ նրանցից, ովքեր դժգոհ են կամ չեն համակրում կառավարող կուսակցությանը: Ընտրական համակարգը ԱՄՆ-ում խոչընդոտում է նոր կուսակցությունների ստեղծումը, սակայն այն չի արգելում դրանց կազմավորումը: Փոքր կուսակցությունները, որոնց ԱՄՆ-ին նվիրված քաղաքագիտական ուսումնասիրությունների մեջ հաճախ կոչում են «երրորդ կուսակցություններ», գրեթե միշտ եղել են ամերիկյան քաղաքական կյանքի բնորոշ գիծը: ԱՄՆ-ի փոքր կուսակցությունները կարելի է բաժանել չորս հիմնական խմբի, որոնք են՝ ա) գաղափարական կուսակցություններ, բ) մեկ խնդրի կուսակցություններ, գ) տնտեսական բողոքի կուսակցություններ և դ) խմբակցային կուսակցություններ: Փոքր կուսակցությունները շատ կարճատև կյանք են ունենում և երբեմն կազմավորվում և կազմալուծվում են ընդամենը մեկ կամ երկու ընտրություններին մասնակցելուց հետո: Համեմատաբար երկար են գոյատևել գաղափարական կուսակցությունները, որոնք մեծամասամբ դուրս են եղել ամերիկյան քաղաքական կյանքի հոսանքից և հանդիսացել են միայն գաղափարակիցների կազմակերպություններ: Նրանք չեն ունեցել կայուն սոցիալական հենարան և չնայած իրենց որոշակի երկարակեցության՝ չեն կարողացել մասնակցել նախագահական ընտրություններին: Այդպիսի կուսակցություններից էին օրինակ, Սոցիալիստական բանվորական կուսակցությունը և Աշխատավորների սոցիալիստական կուսակցությունը: Իսկ այն, որ փոքր կուսակցություններն ամերիկյան քաղաքական կյանքի բնորոշ գիծն են եղել և մնում, ապացուցում է նաև պատմությունը: 1920թ. նախագահական ընտրություններին մասնակցում էր ֆերմերա-բանվորական կուսակցությունը (թեկնածու՝ Պ. Կրիստենսեն), 1924թ.՝ Առաջադիմական կուսակցությունը (թեկնածու՝ Ռ. Լաֆոլլետ), 1936թ.՝ Միութենական կուսակցությունը (թեկնածու՝ Ռ. Լենկե), 1948թ.՝ Նահանգների իրավունքի (թեկնածու՝ Ս. Թերմոնդ) և Առաջադիմական կուսակցությունները (թեկնածու՝ Գ. Ուոլլես), 1952թ. Առաջադիմական կուսակցությունը (թեկնածու՝ Վ. Հալինան), իսկ 1968 և 1972թթ.՝ Ամերիկյան անկախ կուսակցությունը [10]: Ըստ էության, մեկ խնդրի երրորդ կուսակցություն կարելի է համարել նաև այն քաղաքական խմբավորումներին, որոնք, մերթ և մերթ ասպարեզ իջնելով, պաշտպանում են ընտրություններին մասնակցող այսպես կոչված անկախ թեկնածուներին: Վերջին երկու տասնամյակների ընթացքում այդպիսի անկախ թեկնածուներ պվելի հաճախ են երևում: 1976թ. ընտրություններին մասնակցում էր անկախ թեկնածու Յու. Մակկարտին, 1980թ.՝ Զ. Անդերսոնը, իսկ 1992թ.՝ Ռոս Փերոն: Սակայն այնքան ամուր է երկկուսակցական համակարգը և այնքան կոշտ են քաղաքական պայքարի ամերիկյան կանոնները, որ երրորդ կուսակցություններից և ոչ մեկին այդպես էլ չի հաջողվել որևէ արդյունքի հասնելու: Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, 1920թ-ից այս կողմ տեղի ունեցած նախագահական ընտրությունների մեծ մասում երրորդ թեկնածուները հիմնականում ոչ մի ընտրիչ չեն ունեցել պրեզիդենտին ընտրող ընտրիչների կողմից: Թերևս բացառություն կարելի է համարել 1924, 1948 և 1968թթ. ընտրությունները, որոնց ժամանակ երրորդ թեկնածուներին պաշտպանող համապատասխանաբար 13, 39 և 46 ընտրիչներ էին հայտնվել ընտրիչների կողմից: Փոքր կուսակցության թուլության պատճառներից մեկն էլ այն է, որ կառավարող երկու կուսակցությունների կողմից նախընտրական ժողովների ազգային համագումարների գումարումը ազատ քաղաքական մթնոլորտում, հնարավորություն է տալիս այլախոհներին ոչ թե դուրս գալու և միանալու փոքր կուսակցություններին, այլ մնալու կուսակցության շարքերում և ազդեցություն ունենալու թեկնածուների ընտրության և քաղաքականության վրա: Օրինակ՝ հակապատերազմական շարժումը մեծ ազդեցություն թ-

դեց 1968 և 1972թթ. Դեմոկրատական կուսակցության ազգային համագումարների վրա: 80-ական թթ. ԱՄՆ-ում բավականին բարձրացել էր սևամորթների քաղաքական ակտիվությունը, ստեղծվել էին բարենպաստ պայմաններ նրանց շահերը պաշտպանող համազգային, նոր քաղաքական կուսակցության կազմավորման համար: Սակայն դա տեղի չունեցավ, որովհետև Դեմոկրատական կուսակցության ներսում ոչ ոք չխոչընդոտեց սևամորթների պաշտպանությամբ հանդես եկող խմբավորումների ծավալած գործունեությունը, որոնք մեծ դեր ունեին 1984 և 1988թթ. ազգային համագումարներում (1988թ. Դեմոկրատական կուսակցության կողմից նախագահի թեկնածու առաջադրվելու համար համար պայքար էր ծավալել Ջեսի Ջեքսոնը, որն ԱՄՆ-ի պատմության մեջ առաջին սևամորթ քաղաքական գործիչն էր, որ քիչ մնաց հաղթելու նախնական ընտրությունների ժամանակ): Այնուամենայնիվ խմբակցային տարանջատման վտանգը սպառնում է երկու կուսակցություններին էլ, և այն ջանքերը, որ նրանք գործադրում են նման բաժանումից խուսափելու համար, հենց համարվում է այն մեծագույն ազդեցությունը, որ ունեն երրորդ ուղղության կուսակցություններն ու քաղաքական ուժերն ԱՄՆ-ի ներքաղաքական կյանքի վրա[12]:

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. ԱՄՆ նախագահների կառավարման տարիների որոշ անհամատասխանություն կարող է նկատվել գրականության մեջ և տեղեկատվական աղբյուրներում: Որոշ ուսումնասիրողներ կառավարման տարեսկիզբը հաշվվում են ընտրվելու ամսից՝ նոյեմբերից, մյուսները պաշտոնը ստանձնելու օրվանից՝ հունվարից, որն արդեն թվագրվում է հաջորդ տարվան:
2. Տես <http://www.ipl.org/div/potus/>
3. Տես Ստիվեն Ջ. Ուեյնի «Քաղաքական կուսակցություններ» հոդվածը, ԱՄՆ-ի տեղեկատվական ծառայությունների տարածաշրջանային ծրագրերի Վիեննայի գրասենյակի կողմից ռուսերեն հրատարակված «Պրեզիդենտական ընտրություններ - 1992» գրքում, էջ 17:
4. Տե՛ս Политическая жизнь в США. М., 1966, стр. 41-88.
5. Տե՛ս Ջեյմս Բ. Վիլսոն, ԱՄՆ քաղաքական կուսակցությունները և ընտրական համակարգը, Երևան, «Փյունիկ», 1994, էջ 10:
6. Տե՛ս Նույն տեղը
7. Տե՛ս Избирательная кампания экс-госсекретаря США Хиллари Клинтон, объявившей о намерении баллотироваться на пост президента в 2016 г., может стать самой дорогой в истории Соединенных Штатов. <https://news.mail.ru/politics/21700601/>
8. ԱՄՆ-ի քաղաքական համակարգի մասին ավելի մանրամասն տես Է. Ա. Իվանյան, Սպիտակ տուն. պրեզիդենտներ և քաղաքականություն, Եր., 1979, Ջեյմս Բ. Վիլսոն, ԱՄՆ պրեզիդենտական համակարգը, Եր., «Փյունիկ», 1993 և ԱՄՆ քաղաքացիական ազատությունները և քաղաքացիական իրավունքները, Եր., «Փյունիկ», 1993, Черняк Е.Б. Государственный строй и политические партии США, М., 1957; Политические институты США. История и современность, Б.И.Борисюк и др., М., Наука, 1988.
9. Տե՛ս Лестер Дэвид и Айрин Дэвид. Как Америка выбирает президента. В кн. Президентские выборы 1992, стр. 2-8; Стивен Прессмен. Предварительные выборы и предвыборные митинги: отбор кандидатов. В кн. Президентские выборы 1992, стр. 18-22.

10. Տե՛ս Политические партии США в новейшее время. М., изд-во МГУ, 1982, стр. 271.
11. Տե՛ս նույն տեղում, էջ 271.
12. ԱՄՆ ընտրական համակարգի և կուսակցությունների մասին տեղեկատվությունը տես նաև Abramson, Paul R., John H. Aldrich, and David W. Rohde. Change and Continuity in the 1996 Elections Congressional Quarterly Press, 1998; Aldrich, John Why parties? The Origin and Transformation of Political Parties in America, University of Chicago Press, 1995; Ansolabehre, Stephen and Shanto Iyengar. Going Negative: How Political Advertisements Shrink and Polarize the Electorate, Free Press, 1996; Bibby, John F. Governing by Consent: An Introduction to American Politics and edition, Congressional Quarterly Press, 1995; Cohen Joshua and Joel Rogers. Reflecting All of US: The Case for Proportional Representation, Beacon Press, 1997; Denton, Robert E. The 1996 Presidential Campaign: A Communication Perspective Praeger Press, 1998; Flanigan, William H., and Nancy H. Zingale. Political Behavior of the American Electorate. 9th edition. Congressional Quarterly Press, 1998; Grofman, Bernard. Race and Redistricting in the 1990s, Agathon Press, 1998; Handlin, Amy H. Whatever Happened to the Year of the Woman?; Why Women Still Aren't Getting to the Top in Politics, Arden Press, 1998; Heineman, Kenneth J. God Is a Conservative: Religion, Politics and Morality in Contemporary America. New York University Press, 1998; Jones, Charles O. Passages to the Presidency: From Campaigning to Governing. Brookings Institution Press, 1998; Maisel, L. Sandy. The Parties Respond: Changes in American Parties and Campaigns. 3rd edition. Westview Press, 1997; Mann, Thomas E., and Norman J. Ornstein. Congress, the Press, and the Public. Brookings Institution Press, 1994; Mayer, William G., et al. In Pursuit of the White House: How We Choose Our Presidential Nominees. Chatam House, 1995; Polsby, Nelson W., and Aaron Wildavsky. Presidential Elections: Strategies and Structures of American Politics 9th edition. Chatam House, 1996; Selnow, Gary W. Electronic Whistle-Stops: The Impact of the Internet on American Politics. Praeger Press, 1998; Thomas, G. Scott. The United States of Suburbia: How the Suburbs Took Control of America and What They Plan to Do With It. Prometheus Books, 1998. Thomas, Norman G., and Joseph A. Pilka "Elections Politics" in The Politics of the Presidency. 4th edition. Congressional Quarterly Press, 1997, pp. 43-95; Wayne, Stephen J. The Road to the White House, 1996 St. Martins Press, 1995 և այլն:

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

#### **Կուսակցական գործունը ԱՄՆ-ի քաղաքական համակարգում (պատմաքաղաքագիտական ակնարկ) Գարիկ Քեյան**

ԱՄՆ-ի երկկուսակցական համակարգում Ղենոկրատական և Հանրապետական կուսակցությունները, միմյանց փոխարինելով, իրենց ձեռքում են պահում բարձրագույն օրենսդիր և գործադիր իշխանությունները: ԱՄՆ-ի քաղաքական կուսակցությունների գործունեության մեխը նախազահական ընտրությունների նախապատրաստումն ու անցկացումն է: Նախազահի թեկնածուներ սկզբից առաջադրում էին Կոնգրեսի անդամները, որոնք, ըստ կուսակցական պատկանելության, գաղտնի հավաքվում էին փակ դռների հետևում և որոշում թեկնածուին: Հետագայում՝ սկսած 1831թ-ից, թեկնածուների առաջադրումը սկսեցին կատարել կուսակցությունների ազգային համագումարներում: Ընտրական համակարգը ԱՄՆ-ում խոչընդոտում է նոր կուսակցությունների ստեղծումը, սակայն այն չի արգելում դրանց կազմավորումը: Փոքր կուսակցությունները, որոնց հաճախ կոչում են «երրորդ կուսակցություններ», գրեթե միշտ եղել են աներկյան քաղաքական կյանքի բնորոշ գիծը:

РЕЗЮМЕ

Партийный фактор в политической жизни США  
(историко-политологический очерк)

Гарик Керян

**Ключевые слова:** США, двухпартийная система, президентские выборы, Конгресс, избирательная система, национальные съезды партий, предварительные выборы, третейские партии.

Демократическая и Республиканская партии США, сменяя друг друга, сохраняют в своих руках законодательную и исполнительную власть. Основная цель в деятельности политических партий США – это подготовка и проведение президентских выборов. Изначально кандидатов в президенты выдвигали члены Конгресса, которые по принципу партийной принадлежности тайно собирались за закрытыми дверями и выбирали кандидата. Потом, начиная с 1831 года, кандидатов начали выдвигать на национальных съездах партий. Избирательная система в США не способствует созданию новых партий, однако и не запрещает их образование. Малочисленные партии, которых чаще всего называют “третейскими партиями”, почти всегда были в политической жизни США.

SUMMARY

Party Factor in US Politics  
(Historical and Political Essay)

Garik Keryan

**Keywords:** US, two-party system, the presidential elections, Congress, the electoral system, national conventions of parties, pre elections, tertiary parties

The US Democratic and Republican parties, one after another, keep in their hands the legislative and executive power. The main objective of the political parties in the United States is the preparation and organization of presidential elections. Originally, the presidential candidates were nominated by the members of Congress, who gathered secretly behind the closed doors by the principle of party affiliation and selected the candidate. Then, since 1831, the candidates have started to be nominated by national conventions of parties. The electoral system in the United States is not conducive to the creation of new parties, but does not prohibit their formation either. Small parties, which are often called "tertiary parties" were always present in the political life of the United States.